



Երկուշաբթի, 20 Ապրիլ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, զորս ինձ իմաստութիւնս պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՄՈՍ 78

ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԻԸ

Լսեցէք ինչ որ կ'ուսուցանեն, ով իմ ժողովուրդս,
 ականջ դրէք ըսելիքներուս:
 Մենք մեր զաւակներէն պիտի չպահենք,
 այլ՝ գալիք սերունդներուն պիտի պատմենք
 Տիրոջ հզօր գործերը՝ օրհներգութեան արժանի,
 անոր կատարած սքանչելի գործերը:
 Որպէսզի նոր սերունդները իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնեն.
 չնոռնան ինչ որ անկա ըրաւ, այլ՝ անոր պատուէրները գործադրեն:
 Անհնազանդ եւ ապստամբ չըլլան իրենց նախահայրերուն նման.
 այն սերունդին՝ որ Աստուծոյ չվստահեցաւ,
 եւ Աստուծոյ հաւատարիմ չեղաւ:
 Մոռցան իրենց համար Աստուծոյ ըրածները,
 անոր ցոյց տուած սքանչելի գործերը:
 Աստուած անոնց հայրերուն դիմաց հրաշքներ ըրաւ
 ծովը ճեղքեց եւ անոր մէջէն անցուց զանոնք,
 զանոնք առաջնորդեց ցերեկը՝ ամպով,
 եւ գիշերն ամբողջ՝ կրակի սիւնով:
 Անապատին մէջ ժայռերը ճեղքեց
 եւ առատօրէն խմելիք ջուր տուաւ անոնց՝ երկրին խորերէն:
 Բայց անոնք շարունակեցին Աստուծոյ դէմ մեղանչել:
 Գիտակցաբար զԱստուած փորձեցին՝
 իրենց ցանկացած կերակուրները ուզելով:
 Աստուծոյ դէմ խօսեցան, եւ ըսին.
 «Աստուած կրնա՞յ անապատին մէջ ուտելիք տալ»:
 եւ Աստուած վերէն հրաման տուաւ ամպերուն,
 եւ երկինքին դռները բացաւ,
 եւ որպէս ուտելիք՝ երկինքէն մանանայ տեղացուց
 երկնային հաց տուաւ անոնց:
 Մարդիկ հրեշտակներու հացէն կերան:
 Անոնց վրայ փոշիի առատութեամբ միս տեղացուց:
 Անոնք կերան առատօրէն, եւ լիացան
 Աստուած իրենց ցանկացածը տուաւ:
 Հակառակ այդ բոլորին, անոնք դարձեալ մեղանչեցին,
 չհաւատացին անոր գործած հրաշքներուն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



ԵՐԵՄԻԱ ԵՒ ՌԵՔԱԲԵԱՆՆԵՐԸ (35:1-19)

Հեղափոխական հապուած մըն է որ կը ներկայացնէ 35-րդ գլուխը: Տերը կը պատուիրէ Երեմիա մարգարէին որպէսզի երթայ եւ Ռեքաբեանները հրաւիրէ Ասպուծոյ փունը եւ անոնց գինի հրամցնէ որպէսզի խմեն: Անոնք պատասխանեցին. «**Գինի չենք խմեր, որովհետեւ մեր հայրը մեզի պատուիրեց ու ըսաւ. "Դուք ու ձեր որդիները յաւիտեան գինի պիտի չխմէք, փուն մի՛ շինէք, մի՛ ցանէք, այգի մի՛ փնկէք ու մի՛ սրանաք, հապա ձեր օրերը վրաններու մէջ բնակեցէք, որպէսզի ձեր պանդուխտ եղած երկրի վրայ շատ օրեր ապրիք: Մեր հօրը հրամայածին պէս անոր խօսքին մտիկ ընելով հնազանդութիւն ընելով մեզի հրամայածը կը գործադրենք»** (6-10 հմբ):

Ասպուած այս հապուածով կ'ուզէ համեմատական մը ընել Ռեքաբեաններու եւ Իսրայէլի ժողովուրդին միջեւ: Անոնք որ զԱսպուած չէին ճանչնար, այնպէս ինչպէս Իսրայէլացիները կը ճանչնային, բայց անոնք հնազանդելով իրենց հօրը խօսքին մնացին հաւատարիմ այդ պատուէրին, իսկ իսրայէլացիները, որոնց Ասպուած փարբեր փարբեր առիթներով պատուիրեց, թելադրեց, բայց անոնք երբեք ականջ չփուին Ասպուծոյ այդ պատուէրներուն, եւ իբրեւ հետեւանք անոնց վրայ պիտի բերէ կոտորածը: Մարգարէն գիտէ որ անոնք պիտի մերժեն գինի խմելը, բայց ասով Ասպուած կ'ուզէ ցոյց փայլ, ոչ թէ մարգարէին, այլ ժողովուրդին, թէ փեսէք Ռեքաբեանները ինչպէս հաւատարիմ են իրենց նախահօր պատուիրանին, մինչ դուք անհնազանդ ու անհաւատարիմ: Ասպուած որ համեմատական կ'ընէ, անով ցոյց փայլու հետեւեալը.

1. Ռեքաբեանները հաւատարիմ են Ռեքաբի, որ իրենց նման մարդ է, մարդկային իմաստութեամբ, կարողութեամբ, եւ մահկանացու մը: Մինչ Իսրայէլի պարագային, յաւիտեանական Ասպուածն է իրենց այդ պատուէրը փութողը:
2. Ռեքաբեաններու պարագային երբեք կարիքը չունեցան յիշեցնելու գնով այդ պատուիրանը յիշելու, որ այս պարագային մահկանացու մըն է այդ պատուիրանը փութողը: Մինչ Ասպուծոյ պարագային մնայուն կը յիշեցնէ: Ռեքաբեաններու պարագային մէկ անգամ փրուեցաւ իրենց այդ պատուէրը, մինչ Ասպուած փարբեր փարբեր առիթներով յիշեցուց, Իր մարգարէները դրկեց, բայց անոնք երբեք ալ մտիկ չըրին ու չհնազանդեցան:

«**Անոնց խօսեցայ, բայց մտիկ չըրին, անոնց կանչեցի, բայց պատասխան չփուին»** (17 հմբ): Ահա Ռեքաբեաններու հաւատարամութեան իբրեւ արդիւնք անոնք պիտի վայելեն Տիրոջ ներկայութիւնը եւ Անոր օրհնութիւնը:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ քազմամեղիս:*